



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԱՆԴՐԱՆԻԿ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԿՈՆԴԱԿԸ

ԳԵՎՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔ ԱԶ-ԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԻՆԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՐՈՅ ԷԶՄԻԱՍՆԻ

համայն հոգևոր դասուն և ամենայն ժողովրդյան նուիրե ողջուն հայրական և Օրհնութիւն Հայրապետական:

Մեր այս անդրանիկ Օրհնութիւն Կոնդակով հայտնում ենք խորհրդային Հայաստանի և խորհրդային Միության, ինչպես և Սփյուռքի համայն Հայ ժողովրդին՝ թէ 1945 թվի հունիսի 22-ին, Ս. Էջմիածնի Լուսավորչահիմն Մայր տաճարում, Տաճն Կիլիկիո Շնորհազարդ Տ. Գարեգին Ա. կաթողիկոսի նախագահությամբ գումարված Ազգային-Եկեղեցական ժողովը ընՏՐԵՑ ՄԵԶ Ս. Լուսավորչի Հայրապետական Աթոռի ԳԱՀԱԿԱՆ ժողովին ներկա եղող 111 պատգամավորների ՄԻԱԶԱՅՆ հավանությամբ: Նույն ամսի 24-ին ընդունեցին Հայրապետական Օծումն՝ Հայաստանյայց Եկեղեցվո ծեսի և ավանդության համաձայն. հինգ եպիսկոպոսների և հանդիսադիր Տաճն Կիլիկիո Շնորհազարդ Տ. Գարեգին կաթողիկոսի ձեռնով:

Հայ եկեղեցու հնավաճ սովորության և կանոնների թելադրությամբ, նախան Օծումն, ծունդ յրի իջման սեղանի առաջ և ուխտեցի ցմահ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՄՆԱԼ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՆ, անխախտ պահպանել նորա կանոնները, դավանաճէն ու ավանդությունները և անձեռնիրությանը ծառայել ՀԱՅ ժողովրդին և ՀԱՅՐԵՆԻՔԻՍ:

Ամենայն Հայոց Հայրապետի կոչումն, Ազգային-Եկեղեցական ժողովի կատարյալ վստահությունը և հավատացյալ հոտիս ոսկեվառ ակնկալությունները խորապես հուզում են սիրտս և ներշնչում հոգիս՝ զգացնելով ինձ պարտականությանն ու պատասխանատվությանն ծանրությունը:

Սաբաւո եմ զգում հիշելով ծանր պարտականությունները և բազմապիսի հոգսե-

րը. որ Ամենայն Հայոց Հայրապետի ուսերին է բարձած, և խորհում եմ՝ պիտի կարողանամ արդյոք, ծերությանս հասկում, խղճի մտոք կատարել պարտս. պիտի հաջողվի՞ արդյոք ինձ՝ ներհնապես ու արտա-նապես հիմնովին ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼ հայ հնադարյան բանգարժեք կոթողը՝ Ս. Էջմիածնի ՄԱՅՐ ՏԱՀԱՐԸ:

Պիտի կարողանամ արդյոք նորաբայ հոգևոր քննադատը իր բարձրության հասցրեն՝ մատակարարելով Հայ եկեղեցուն արժանավոր հովիվներ:

Պիտի կարողանամ արդյոք, որպես անկ է կազմակերպել խորհրդային Հայաստանի, խորհրդային Միության և մանավաճ Սփյուռքի Հայոց Թեմերը. որ հայ ժողովուրդը հոգեպես մխիթարված լինի, տնտեսական ծանր պայմանների դիմաճա և օտար աշխարհներում, կուլտուրապես բարձր ժողովուրդների մեջ ապրելով՝ չլուծվի և չաճանա:

Պիտի կարողանամ արդյոք եկեղեցական միասնականության հետ զորացնել ու պահպանել նաև համազգային միությունը, որոնք զորեղ գրավականներ են մեր ազգի համերաշխ ապրելուն, զորանալուն և զարգանալուն:

Պիտի տեսնեմ արդյոք օտարության մեջ ցամ ու ցրվ ընկած Հայությունը համախմբված իր հայրենի երկրում՝ խորհրդային Հայաստանի իշխանության ներքո, որ աշխարհադ զոցեմ, հոգուս ու մարմնիս հանգիստ տամ և հայ ժողովրդի ողորմիսը լսեմ:

Այս խոհերի մեջ՝ հիշում եմ Գեթսեմանի պարտեզում, ներհին հոգեկան մախառմների և ծանր ապրումների ենթակա, աղորող Փրկչի խոսքերը՝ «Հոգիս հոժար է, բայց մարմինս տկար», սակայն Նա Աստուծո օգ-

նուրբան ապավինած, նորա հոգով կազդուրված, հաղթահարում է իր մարմնի բույությունը և սիրով տանում իր խաչը: Այդ աչքի հոգին է հավատո հոգին, դեպի ազգն ու եկեղեցին տածած սիրո հոգին և կոչման ու պարտիս գիտակցության հոգին, որ պիտի կազդուրե նաև իմ բույլ ումեքս, գորացնե ինձ ու պարզեցնե անե Տիրոջ, Եկեղեցու և Հայրենիքի հանդեպ:

Իր մարմնի բույության հաղթանակող Փրկիչն է, որ այժմ կանգնած է աշխա առաջ և հոգու մեջ նկարված և ձայնում է— Փրկչի լուծը փաղը է և նորա բեռը բերե: Նա է— որ բեյադրում է ապավինել Տիեզերքի Արարչի օգնության, որ տնօրինում է մարդկանց բախտը, որ աշակցում է բարու և ճշմարտի հաղթանակին: Նա է, որ բեյադրում է նաև ապավինել հայ միասնական եկեղեցուն և ժողովրդին, հուսալ նորա խանդավառ ոգևորության և համերաշխ գործունեության, վստահել նորա ոգևորիչ խոսքերին և խոստումներին, որոնց կամով ստանձնել էմ այս պատասխանատու պաշտոնը: Եվ վերջապես հուսադրում է ինձ այն գիտակցությունը՝ բնական չեմ, այլ ունիմ յծակից վստահելի Արդարիքներ և վստահելի աշակիցներ՝ ի դեմս Սրբազան Առաջնորդների և բարեշնորհ Քահանայության, որոնք կոչված են նույն գաղափարին ծառայելու և նույն պատասխանատվության ենթակա և կատարյալ վստահություն են ներշնչում իրենց համերաշխ գործունեությանը, որ հավատ և հույս է տալիս Մեզ՝ Մեր ապագա խոշոր ձեռնարկների հաջողությունը:

Եղբայրական սիրո ողջույնս Քեզ՝ Տանն Կիրիկիո կաթողիկոսիդ, Տիեզերանդ ողջույնս միաբանական Ուխտիդ և Հայրապետական Օրհնությունս սիրեցյալ հոտիդ: Հոգիս հրեմում է տեսնելով Հայ եկեղեցական Արդարների համերաշխ դիրքը և սիրո շաղկապը Մայր Աթոռի հետ, որ Մեր օրով անշուշտ առավել ևս պիտի զորանա, որով ազգի կողմից ուսերիս բարձած փաղը, բայց ծանր լուծը պիտի բերեանա և դյուրանա կոչմանս հետ կապված պարտիս կատարումը:

Ցավ է ինձ, որ Տանն Կիրիկիո կաթողիկոսական Աթոռը զրկված է իր պատմական տեղերից, որ այնքան հարուստ է հայ ժողովրդի կուլտուրական և պատմական հուշարձաններով, որոնց հետ անհակոթելիորեն կապված է Կիրիկիո հայ ժողովուրդը: Մակայն մխիթարական է, որ այդ տարագիր և աստանդական Աթոռը այսօր դառնում է

կայուն և հաստատուն: Առավել ևս ուրախ եմ, որ այդ Աթոռը բազմել է Մեր հոգեկից հարազատ Եղբայր՝ Տանն Կիրիկիո Շնորհազարդ Գարեգին Ա կաթողիկոսը, Մեզ հետ միասին սնված ու դաստիարակված Ս. Էջմիածնի հոգևոր նեմարանում: Երանկանիշատակ Ժևորգ Դ-ի և Հայոց Հայրիկի ազգասիրական, հայրենասիրական և կրոնասիրական զգացումներով ներշնչված, նույն գաղափարն է ֆեմայը հեզու արտահայտությունները տեսած ու վայելած, Մեզ հետ անշուշտ պիտի պայքարե եկեղեցական և ազգային միասնականության և համերաշխ գործունեության գաղափարները կյանքի մեջ իրացնելու և նույն իրավական բնույթ տալու համար, որոնց սկիզբը զրկեցավ Ազգային-Եկեղեցական ժողովում:

Հոգով ուրախ են նաև, որ Սյուրիո գաղափարական արշունհամ ու տանջված հայ ժողովրդի բեկորները հուսադրելը, մխիթարելը, դաստիարակելն ու նույն հոգեպես զորացնելը Քեզ է վիճակված: Մարդում եմ Տիրոջը, որ արևշատություն պարգևե Քեզ և մարմնով ու հոգով զորացնե, որ իբրև երկրորդ Մովսես, Սյուրիո հայ ժողովուրդը Ավետյաց երկիր առաջնորդես, որպեսզի իբրև ազգ ամբողջանան, հոգևոր, ազգային և պետական կեդրոն ստեղծենք ի մխիթարություն համայն Ազգի և Հոգևոր դասի:

Տիրականդ ողջույնս նաև Ձեզ՝ Ամենապատիվ Ս. Կյուրեղ Պատրիարք Հայոց Երուսաղեմի և Հայրական Օրհնությունս միաբանական Ուխտիդ: Ս. Երուսաղեմի Պատրիարքական Աթոռը իր սրբազան վայրերով, ուր ծնվել է աշխարհի Փրկիչը, որ եղել է նորա մկրտության սրբազան ավազանը, ուր հնչել է Փրկչի ավետարանը, ուր լսվել է նորա կենդանի ու կենարար փառքը՝ Հայ Ազգի պարծանքն է, Հայ եկեղեցու և նորա հոտի Սրբություն Սրբոցը: Դեպի այդ նվիրական վայրերը դարձած է նաև համայն Բիստոնյա աշխարհի աչքը:

Հայ եկեղեցու և Բիստոնյա աշխարհի այդ նվիրական Սրբությունների պահպանության ու պայծառության համար է, որ Դուք՝ Ս. Հակոբյանց միաբանական Ուխտիդ հետ՝ օր ու գիշեր տնեում եք: Աստվածային խնամքն ու հովանին եմ հայցում Ձեր և Ուխտիդ վերա, որպեսզի սրբությանը զորանա, Բիստոնեական ջերմեռանդությամբ անիք և կենդանի օրհնակ հանդիսանաք բոլոր աչքելու ուխտավորներին, որպեսզի նոքա պատկառաբեմով նիշեն Ս. Տեղերն ու Միաբանությունը և Բիստոնեական հավատով զորացած ու վերածնված դառնան ի-

րենց վայրերը: Մաղրում ևմ Բարձրյալին.
որ Ս. Հակոբյանց վանքն իր ժառանգավո-
րաց դպրոցով Բրիտանական կրօնի Բարձ-
րագույն սերմնարան և լուսատու ջան հան-
դիսանա Հայ ժողովրդի համար և սերտ կապ
պահպանե Ս. Էջմիածնի և Մայր Հայրենի-
քի հետ, ինչպես ցարդ:

Տիրավանդ ողջույնս նաև Ձեզ՝ Ամենա-
պատիվ Ս. Գևորգ Արքեպիսկոպոս, Տեղապան
Կ. Պոլսի Պատրիարքական Աթոռի, Հոգևոր
Դասիդ և Եկեղեցական վարչությանդ և Հայ-
րապետական Օրհնությունս հոտիդ: Ցավ է
Մեզ Եկեղեցուդ փառավոր անցյալի և հո-
տիդ բարգավաճ ու բարեկեցիկ վիճակի փո-
խարեն՝ տեսնել այսօր փոքրացած հոտդ
հոգեպես և նյութապես անմխիթար վիճակի
մեջ: Առավել ևս ցավ է, որ փոքրաթիվ հո-
տիդ մեջ գոյություն ունին իրերամերժ
տրամալորություններ, որի հետևանքով պա-
ռակտված է Մեր սիրելի հոտը: Սիրո. ներո-
ղամտության և համբերատարության ոգին
է Ձեր բոնեյիվ ուղին հանդես ժողովրդյան.
Իսկ հոտիդ՝ Մեր Հայրական հորդորն է՝ դե-
կավարմել ոսկեգիր Եղիշի կյանքի իմաս-
տության բովից առած խոսքերով՝ «Ձուգու-
րիւն է մայր բարեաց. անգուգուրիւն ծնող-
շարեաց»: Որպես Ամենայն Հայոց Հայրա-
պետության ներկայացուցիչ՝ Ձեզ վերա
ծանոթանում է պարտականություն Հայ Եկե-
ղեցու կանոններն ու կարգերը անխաբար
պահպանել և ի պահանջել հարկին՝ խոհե-
մությամբ, իմաստությամբ, բայց և հետե-
վելով մեր սուրբ հայրերին՝ Բրիտանական
արիությանը ընթանալ:

Մաղրում եմ նաև Ամենակարողին պարգևել
Ձեզ հոգի իմաստության և խոհեմության,
հոգի հանճարու և արիության, որ անդառա-
պարտ մնա՛վ Աստուծո, Ձեր խղճի և Ազգի
ու Եկեղեցվո առաջ:

Ողջունում եմ նաև Ձեզ՝ Հայ Եկեղեցու
սրբազան Առաջնորդներիդ, որ գլուխ եմ
Եկեղեցու և տեսուչ ժողովրդյան և Տիրա-
վանդ պատվերի համաձայն՝ պարտավոր
եմ «նախ առնել և ապա ուսուցանել», ար-
դարության և նշմարտության ուղիով ըն-
թանալ, օրինակ հանդիսանալով վիճակե-
րիդ սրբազնագործ պաշտոնեության և բա-
րեպաշտ ժողովրդյան:

Արքուն հսկողություն ունեցե՛ք Եկեղեցի-
ների վերա, որ Աստուծո տունը վայելուչ և
բարեկարգ վիճակի մեջ լինի և այնտեղ հրե-
շեցրե՛մ հավատացյալների ականջին՝ Փրկչի
կենսատու և կենարար խոսքը ի մխիթա-
րություն և ի դաստիարակություն: Սփյուռ-
քի սրբազան առաջնորդներ, Բաղրաբարո

և հեզամամուր՝ բնավորությամբ և կիրք վա-
րեցողությամբ կապեցե՛ք Մեր տարագիր
ժողովրդի սիրտը Ձեզ հետ. սիրով վառեցե՛ք
ու շաղկապեցե՛ք Ս. Էջմիածնի և մեր Հայրե-
նիքի՝ Խորհրդային Հայաստանի հայրենի
հուշարձաններին հետ ի մխիթարություն և
ի շինություն նոցա: Հորդորեցե՛ք Ձեր հոտը
կուսակցական պայքարներից հեռու կենալ.
սույնպես նաև քչնամական Ելույթներից
ու արա՛հներից՝ մեր Մայր Հայրենիքի՝ Խ.
Հայաստանի և նորա հարազատ ու հավա-
տարիմ կառավարության հանդեպ: Այլ որ
կարևորագույնն է՝ ըստ Ավետարանի՝ անձ-
նագիր հովիվ եղե՛մ Ձեր հոտի, որ
Ձեր ձայնին լսեն և Ձեզ հետևեն, որպեսզի
հափշտակիչ զալլերն անկարող լինեն փախ-
ցնել նոցա Ձեր փարախից:

Ողջույնս նաև Ձեզ՝ Հայ ժողովրդի ներկա-
յացուցիչներիդ՝ Թեմական Պատգամավո-
րական ժողովի և Թեմական Խորհրդի ան-
դամներիդ և այլ ազգային-Եկեղեցական
վարչություններիդ, Դու՛ք կոչված եմ ազգա-
յին-Եկեղեցական գործերը ղեկավարե-
լու, հետամուտ լինելու, որ հայ մար-
դը՝ Հայրենիքի ապագա Բաղաճացին և
հայ կիներ՝ հայ մատաղ սերնդի անմի-
ջական դաստիարակիչը գիտենան և սի-
րեն իրենց մայրենի լեզուն, հայրենի
պատմությունն ու գրականությունը. նա-
նաչեն իրենց փառապանծ նախնիներին,
տեսնեն նոցա հերոսական և անձնվեր պայ-
քար ազգային անկախության, ազգի գո-
յության համար և հանուն Բրիտանական
վե՛հ գաղափարների: Սույնպես նաև նոցա
կուլտուրական և կրթական նվաճումները
գիտության և մանավանդ գեղարվեստի աս-
պարեզներում, որպեսզի օտար Երկնքի
տակ, գորևդ կուլտուրայի աղղեցության եհ-
րակա՛ պահպանեն իրենց ազգային ինճա-
գիտակցությունը և անձույլ մնան:

Հայրական ողջույնս և Հայրապետական
օրհնությունս նաև Ձեզ՝ Քահանայք, Աս-
տուծո տաճարի պաշտոնյայք, Դու՛ք եմ Տի-
րոջ հոտի անմիջական հովիվը. Ձե՛զ եմ դի-
մում Եկեղեցական սրբազան Խորհուրդների
և ծեսերի կատարման համար. Ձե՛զ եմ հա-
վատում իրենց սրտի գաղտնիները. Ձեր
առաջ եմ բաց անում իրենց բարոյական և
նյութական կարիքները. Դու՛ք եմ, որ ա-
նարգել Ելումուտմ ունե՛մ Ձեր ծխերի տնե-
րը: Ուստի հորդորում եմ Ձեզ՝ սիրով և
անքերի կատարել Ձեր պարտականություն-
ները, որ սահմանել են Եկեղեցու Ս. Հայ-
րերը. առանց ծուլության կատարեցե՛ք ա-
վուրական ժամատացությունը, հրապարա-

կային ֆարգուրյամբ կենդանի պահեցե՛հ հոտիդ հավատը և սուրմադրեցե՛հ բարեպաշտական և աստուածահանո գործերի:

Հիսուսավանդ ողջույնս և Հայրապետական օրհնությունս նաև Ձեզ՝ Ազգային Բարեբաներիդ և բարեգործական ու աստուածահանո հաստատությանց Ղեկավարներիդ: Հիշեցե՛հ և փառ տվե՛հ աշխարհի բարիքների առատածե՛ն Պարգևատվին և Ձեր դրամբ, որ Աստուծո աշակցությամբ և Ձեր Բրտնաջան աշխատանքի շնորհիվ ե՛հ վատակել, գործ դրե՛հ ո՛չ միայն անհատական վայելի՛, այլ առավելապես ազգի պատվի և փառքի բարձրացման և նորա մշակույթի զարգացման, ինչպես նաև նորա տնտեսական կյանքի բարելավման համար:

Ազգի մեծությունը նորա ստեղծագործող ոգու և այդ ոգու ստեղծած արգասիքների արժանավորության մեջ է կայանում: Հայ ազգը անցյալում ստեղծագործել է և յուր ստեղծագործության հուշարձանները կազմում են այսօր հայության փառքն ու պատիվը և նորա բարոյական արժեքն օտար կուլտուրական ազգերի առաջ: Նույնը պահանջվում է նաև ներկայից, որի ստեղծագործողը հայ հանճարը պիտի լինի, իսկ գործի մարմնացնողը՝ հայ մեկենսար:

Բարեգործությունը մարդկային կյանքում մեծ դեր է խաղացել, մանավանդ փոքր ազգերի և հատկապես մեր կյանքում, որ աշխարհի ամեն կողմը ցափ ու ցրիվ ընկած հայության բեկորներ ունին՝ նյութական և հոգևոր բազմատեսակ կարիքների ենթակա և աջակցության կարոտ: Ազգային մեծ բարեբաններ, Ձեր կատարելիք գիտակցական և նպատակահարմար բարեգործությունը ոչ միայն պիտի նպաստեն՝ Հայ ժողովրդի տնտեսական կարիքները հոգալով՝ ազգային փառքի ու պատվի բարձրացման ուղին հարթելու, աստուածահանո և կրոնական ասպարեզի բարեգործությամբ՝ ազգապահպանման և ազգային միության գործն ապահովելու, այլև Ձեր նոր ձեռնարկներ անհուն մխիթարության աղբյուր պիտի հանդիսանան նաև Ձեզ համար, կանգնելով երկրի վերա անջնջելի հուշարձաններ՝ Ձեր համարյուն եղբայրների սիրտը շահող և երկնում՝ Տիրոջ գուրբ շարժող:

Մեր գաղութահայությունը, որ պատասխանում է ներգաղթի՝ դեպի օրեցօր վերելքի նամրով ընթացող Հայրենիք՝ Խ. Հայաստանը, մեծ աջակցության է կարոտում և անհրաժեշտ կարիքի առաջ է կանգնած. վերակենդանացող հնադարյան պատմական հաստատությունը՝ Հայ ժողովրդի Սրբու-

յուն Սրբոց՝ Ս. Էջմիածինը, Եյուրական հիմնական բազայի է կարոտում, որ իր այսօրվա և ասլագայի կուլտուրական հաստատությունները՝ Հեմարանը, Տպարանը, Մատենադարանը, Թանգարանը և այլն պահանջելու զարգացնել կարենա, որոնք եղել են և են Ազգի ապահով գոյության հիմքերը և նորա փառքն ու պատիվը:

Հայրական ողջույնս և Հայրապետական օրհնությունս Ձեզ՝ Մամուլի ներկայացուցիչներիդ, հայ ժողովրդի հրապարակային դաստիարակներիդ: Ձեր պարտքն է միշտ վառ պահել հայ ժողովրդի հոգու մեջ այն գաղափարները, որոնք հիմքն են կազմում ազգային ինքնագիտակցության և զարգացման. ըստ այսմ՝ ֆարգել հայ եկեղեցու միասնականության, ազգային միության, հայրենասիրության, համերաշխ գործունեության գաղափարները, որոնք՝ հայ լեզվի և նորա անցյալ պատմության հետ միալ միջոցներ են հայ ժողովրդի անձույլ մնալուն: Պարտականություն ունիք նաև մեր ներկա Հայրենիքի՝ Խ. Հայաստանի գիտության, գեղարվեստի, գրականության և տեխնիկայի վերելքը պատկերելու, որի կենդանի և ակաճատես վկաները հանդիսացան Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորները: Սույնպես նաև այսօրվա այնտեղ ապրող հայ ժողովրդի հերոսական ոգին նշելու և ֆաջալերելու, որ այնֆան փայլուն արահայտվեցավ Հայրենահական մեծ պատերազմում և որի շնորհիվ հայ ժողովրդի անցյալ փառքի շինության վերա նոր աղյուս դրվեցավ: Փառք և պատիվ ապրող հերոսներին և աստուածային օրհնություն պատվով զոհվածներին, որոնք մարմնով մեռած, բայց հոգով կենդանի են, որոնց հերոսության հիշատակը հավիտյան կմնա մեր սրտերում:

Հայրական ողջույնս նաև Ձեզ՝ հայ Տիկիներ և Օրիորդներ. կյանքի ղեկավար միտքը չէ միայն, այլ սիրտը, և առավել ևս սիրտը: Բազմաթիվ դարեր սահել անցել են, մարդու միտքը զարգացել է և մարդու ստեղծագործող մտքի և աշխատունակ ձեռքի շնորհիվ արտաքին աշխարհը կատարելագործվել է, որի հետևանքով բազմատեսակ նյութական բարիքներ են ստեղծվել, բայց մարդն ինքը ապերազանիկ է մնացել: Ինչո՞ւ, որովհետև Փրկչի ոգին, սիրո և մարդասիրության ոգին չի իշխում մարդկանց սրտում:

Հայ Տիկիներ և Օրիորդներ, Դուք, որ աստուածային գերագույն շնորհին ե՛հ արժանացել և սիրո ու մարդասիրության ֆաղ-

ցըր ու Բնույշ զգացմունքներով օծովել հանդես եկե՛ք Ձեր հոգու այդ քանգարժեք գանձով. որպեսզի մտնով հարուստ մարդը դառնա նաև սրտով հարուստ և մարդկային կյանքը իրապես երջանիկ դառնա:

Բոլոր դասակարգերից հետո Քեզ եմ դառնում, իմ սիրելի Հայ ժողովուրդ, Հայրական ողջույնս և Հայրապետական օրհնությունս շնորհելով Քեզ: Անցան պատմական տառապալից օրերդ, գալիս են ուրախության և մխիթարության օրեր: Մի՛րք մխիթարական չէ, որ դարերի հույսերդ այսօր իրականացած են տեսնում, ունիս սեփական ՀԱՅՐԵՆԻՔ և հարազատ ազգային ՊԵՏՈՒԹՅՈՒՆ: Մի՛րք մխիթարական չէ, որ դարերի ընթացում մշտապես ավերվող շին փառանքների և հարուստ գյուղերի փոխարեն և անընդհատ բշտամուց սրախողխող եղող եղբայրների փոխարեն ավերակներից ու մոխրից հարություն առնող շեն փառանքներ ու գյուղեր են տեսնում, օրեցօր կուլտուրապես հառաջադիմող և ազգաբնակչությամբ անող և կուլտուրապես հավասար մակարդակի վերա կանգնած Ռուս մեծ ազգի փառանքների և գյուղերի: Մի՛րք մխիթարական չէ, որ օրեցօր հայրենի երկրիցդ վերանում է տգիտությունը և անկուլտուրականությունը. անէնում է հետամնացությունը և նորա փոխարեն քաղաքում է գիտությունն ու գեղարվեստը իր բոլոր նյութերով: Մի՛րք մխիթարական չէ, որ այսօր ունինք անուանի գիտնականներ՝ անդամներ և. Միության գիտության նեմարանի, որոնց անունները Ռուս մեծ գիտնականների անունների հավասար ծանոթ են եվրոպական գիտական աշխարհին. կամ առաջնակարգ գեղարվեստագետներ, հավասար Ռուս գեղարվեստագետներին:

Մի՛րք մխիթարական չէ. երբ տեսնում են ազգիդ վարած հերոսական պայքարը՝ Միությանական ժողովուրդների շարքում՝

ընդհանուր և իր սեփական Հայրենիքի ազատության համար և բռնության ու ստրկացման դեմ, որ աշխարհի հիացմունքն է բերում: Մի՛րք մխիթարական չէ լսել մեր ֆաշ գավակների ամեն օր հերոսացող նորանոր անունները, որոնք հարստացնում են և վսեմացնում մեր ազգի հնադարյան հերոսական պատմությունը և բարձր պահում Հայ ժողովրդի պատիվը: Մի՛րք մխիթարական չէ տեսնել, որ Ռուս ժողովրդի նման մի հերոս ժողովուրդ և և. ՄԻՈՒԹՅԱՆ նման մի հզոր և արդարադատ ՊԵտություն անձնվիրաբար կանգնած է ԲՈՊԱՄԱԿԱՆ ԱՐԳԱՐ ԴԱՏԱՐ ՊԱՇՏՊԱՆՆԵՐՆԵՐ:

Այո, մխիթարական է. և Մենք՝ քե՛ր՝ որպես Պետ Հայ եկեղեցու և քե՛ր՝ որպես և. Հանրապետությունների Միության սոսկ փառաքանի, խորապես մխիթարված ենք և վստահորեն հայտարարում ենք քե՛ր՝ մխիթարված է նաև քե՛ր՝ Մայր երկրի և քե՛ր՝ Սփյուռքի Հայությունը:

Մաղթենք ՓՐԿԱԶԻՆ, որ իր բազմաշարյա վկայի՝ Ս. Գրիգոր Լուսավորչի հրաշակերտած Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ Հայ մարտիրոս ժողովրդի Մրբություն Մրբոցը, անսասան պահե: Ինչպես նաև Տանն Կիլիկիո Ս. Նրուսադեմի և Կ. Պոլսի Աթոռները, իբրև հավատո հաստատության կորոզներ. որպես հոգևոր դաստիարակության կեդրոններ և իբրև ազգապահպանման սյուներ:

Աղոթենք Տիրոջը, որ այցելու և հովանավոր լինի իր փոքրիկ, բայց հավատարիմ հոտին, հայ ժողովրդին՝ և նորա ազգային գիտակցությամբ նոր զարթած հոգուն կենսունակություն և ստեղծագործող գործություն պարգևե:

Աղոթենք ԲԱՐՁՐՅԱԼԻՆ, որ իր ամենագործը հովանի պահե մեր նորածին ՀԱՅՐԵՆԻՔԻ վերա և նորա կյանքը հարատև անե:

Շնորհ և խաղաղություն եղիցի՝ ընդ ձեզ և ընդ ամենեսյան. ամեն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԵ. . . 2

Սույն օրհնության անդրանիկ Կոնդակը
գրվեցավ ապրիլի 1-ին, 1946 թ.
Հայկական տոմարով ՌՅՂԵ.
Ս. ԷԶՄԻԱՄԻՆ.